

# ԲԱԼԴԻՑՈՒԹԵԱՆ

ԵՒ ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ Վ.ՐԱՅ

ՊԱՐ2 ԽՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ ՃԴ.

ԽԱՆՐՈՒԹԻՒՆ

(Հար.)

ԽԱՆՐՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

Ի՞նչ է ծանրութեան կեղրոնք . — Ասոր՝  
փետրագնտի մը , շաքարի զվարու մը ,  
մակոյկի մը , կառքի մը , և , այլոց մէջ  
գտնուած տեղոյն ազդեցութիւննց :

**ՄԱՐԻԱՄ . — ՅԱԿՈՌ . կ'ուզե՞ս գըն-**  
**տահարով խաղալ :**

**ՅԱԿՈԲ . — ԱԿԿԱՐԵԼԻ է քու փետրա-**  
**գնտովդ խաղալ . շատ գէշէ :**

**ՕՐ . ԹԱԳԱՌՀԻ . — Ի՞նչ ունի ուրեմն**  
**այդ փետրագունտը :**

**ՅԱԿ . — Եատ հին է :**

**ՕՐ . ԹԱԳ . — ԱՌԱՔԵՂԻ պատճառ մը ,**  
**ուր է տեսնեմ :**

**ՄԱՐ . — ԱՀԱԿԱՍԻԿ :**

**ՕՐ . ԹԱԳ . — ՉԵՄ կարծեր որ ասի-  
կա շխտակ երթայ . ասոր մէկ կողմի**  
**ութը փետրութերն ամբովազէս կը**  
**պակիսն :**

**ՅԱԿ . — Միշտ կողմն սկի կ'երթայ :**

**ՕՐ . ԹԱԳ . — ԵՇԵՐ որ շոկեմ :**

**ՅԱԿ . — Ի՞նչողէս :**

**ՕՐ . ԹԱԳ . — Գիտէք թէ որ կողմը**  
**կը հակի :**

**ՄԱՐ . — Հարկ ու փետրութերուն ե-**  
**զած կողմը :**

**ՕՐ . ԹԱԳ . — Անտարակյաս , վասն զի**  
**փետրութերն որչափ ալ թեթև ըլլան ,**  
**դարձեալ կը կըսեն եւ փետրագնտին**  
**այն կողմն աւելի կը ծանրացնեն : Եթէ**

փետրուր ունիք , բերէք որ պակասնե-  
րուն տեղը դնեմ :

**ՄԱՐ . — Ո՛չ , օրինադր , չունինք :**

**ՕՐ . ԹԱԳ . — Լաւ ուրեմն , մէկ կողմն**  
**եղած ութը փետրութերէն չըրսը միւս**  
**կողմը կը փախադրեմ , անանի որ ամեն**  
**տեղ՝ երկու պարագ ծակերուն մէջ**  
**մէկ փետրուր ըլլայ . որովհանրութիւ-**  
**նըն երկու կողման վրայ ալ հաւատա-**  
**րապէս կ'ազդէ և փետրագունտը շլ-**  
**տակ կ'երթայ :**

**ՄԱՐ . — Ի՞նչողէս կ'ըլլայ որ միշտ**  
**փետրագնտին խիցը գնտահարին վրայ**  
**կ'իյնայ և ոչ փետրութերը :**

**ՕՐ . ԹԱԳ . — Որովհետեւ խիցը փետ-**  
**րագնտին աւելի ծանր մասն է և այն է**  
**որ իյնալու ատեն փետրութերը վար**  
**կը քաշէ : Պէտք է գիտնաք , որ մար-**  
**միններն իյնալու ատեն միշտ իրենց**  
**ծանր կողմին վրայ կ'իյնան : Բոլոր մար-**  
**մնոց մէջ մաս մը կայ , որ իյնալու ա-**  
**տեն միւսները վար կը քաշէ , կէտ մը ,**  
**ուր ծանրութեան խւրաքանչիւր մաս-**  
**նեկի վրայ ըրած ազդեցութիւնները կը**  
**միանան : Այս կէտը ծանրութեան իշերն**  
**կը իրջուի հաստատուն մարմին մը հաւա-**  
**սարակը-լեռն մէջ ըլլալու , այսինքն իւր**  
**գտնուած գրից մէջ անշարժ և առանց**  
**իյնալու մնալու համար պէտք է որ իւր**  
**ծանրութեան կեդրոսնէն անցնող կեդ-**  
**րոսնահայեացն իւր խարիսքն , այսինքն յե-**  
**ցած կողմին մէջ ըլլայ : Մարմնոց մը հո-**  
**ւասարակը-ութիւնն այնչափ աւելի**  
**կայուն կըլլայ , որքափ իւր ծանրու-**  
**թեան կեդրոնը ցած ըլլայ : Ահա այս**  
**է պատճառը , որ շաքարի գլուխ մը**  
**իւր խարսիսն վրայ այնչափ հաստատ**  
**կը կենայ . վասն զի իւր ծանրութեան**  
**կեդրոնը խարսիսն շատ մօտ է , և այս**  
**կեդրոննէն անցնող կեդրոնահայեացն ալ**  
**իւր խարսիսն մէջ տեղը կ'իյնայ , որ**  
**աւելի կը գժուարացնէ անոր կօրծա-**  
**նումը : Եթէ ուզենք կընանք շաքարի**

գլուխ մը շընել և գոտքաթէն քիչ մը  
կտրելով գլխավոր կեցնել, որ առեն  
ծանր ութեան կեդրոնէն անցնող կեդ-  
րոնահայեցը թէ եւ գործեալ իս որըս-  
խին մէջ տեղը ի՞ինայ, բայց այս գրից  
մէջ ծանրութեան կեդրոնը շատքարձր  
ըլլալուն՝ լընեալ շաքարի գլխուն մէկ  
փարբիկ շսրմումը կրնայ կեդրոնահայ-  
եացը խարսխէն գուրս հանել և շա-  
քարը կործանել: Աւրեմն մարմնոյ մը  
ծանրութեան կեդրոնն որչափ ցած ըլ-  
լայ և իւր խարսխին մէջ տեղն ինկոշ  
կեդրոնահայեացին մօտենայ՝ նոյն մար-  
մնն այնչափ գժուարաւ կը տապա-  
լի: Եստ անգամ անհրաժեշտ է այս  
բանս գիտնալ, կ'ուզեմ ձեզ այս մա-  
սին օրինակ մը տալ: Օր մը այն ինչ  
ուրիշ չորս անձանց հետ մակոյին մը  
մէջ նստած կ'երթայինք, յանկարծ փո-  
թորիկ մը փոթաւ և հովին սկսաւ այն-  
չափ սստոիկ փշել որ մեր նստակին ա-  
մեն վայրիեան շրջելու վտանգի մէջ էր:  
Մեր երկիւղն այնչափ մէծ էր և յու-  
զումն այնչափ բուռն, որ չը կրնալով  
ալ նստած տեղերնիս կենալ բոլորովնին  
ելանիք կանգնեցանք, որով մակոյին ըս-  
կըսաւ ալ աւելի տարութերիլ. վասն  
զի մեր կանգնելովն նստակին ծանրու-  
թեան կեդրոնը բարձրացաւ, որ մե-  
րինին հետ նոյնն էր. բայց բարեբալ-  
գաբար թիւլարը մեզ պոռաց որ մա-  
կոյինին խորը երկնականիք, անմիջապէս հը-  
նազանդեցանք: Այսու նստակին ծան-  
րութեան կեդրոնը ցածցաւ և սկսաւ  
համբէն նստաղ տարութերիլ և վերջու-  
պէս թիւլարին զայտ գիտնալի ու յի-  
շելը՝ զմեզ վունդէն փրկեց:

Անշուշտ տեսած էր խարսխ բեռ-  
նստարած սայլեր, որոնք իւրաքանչիւր  
քաղի կը տստանին և եթէ քիչ մը ծը-  
ռին անմիշողէս կը շընին. վասն զի  
այնչափ բարձր բեռնստարած են, որ  
սայլին ու խարին բովանդակ կը ոյն

ծանրութեան կեդրոնը շատքարձր կը  
դժոնի և քիչ մը ծաելով՝ իրենց ծան-  
րութեան կեդրոնէն անցնող կեդրոնա-  
հայեացին անուայն խարսխէն գուրս  
կ'իյնայ, որով սայլն խակոյն կը կ'ործանի:  
Ահա այս է պատճառը, որ պնդակառ-  
քերը շատ անգամ կը շընին:

Ծանրութեան կեդրոնը, առանց  
մեր գիտութեան կամ մտածման, մեր  
շարժմանց մէծ մասը կը կանոնաւորէ:  
ՑԱԿ. — Ի՞նչպէս :

ՕՐ. ԹԱԳ. — Մարդ մը եթէ բեռ մը  
կոնըին վրայ բառնայ՝ դէպ առաջ  
կը ծռի, եթէ կուրծքին վրայ բառնայ՝  
դէպ ետեւ և երբ բեռն ուսին կամ  
բաղին վրայ ըլլայ, կամ մէկ ձեռքը,  
պարապ եղած կողմը կը հակի: Սան-  
դուխէ մը վեր ելնելու կոմ աթոռի  
մը վրայ թ սրձրանալու համար դէպ ա-  
ռաջ կը ծռինը և փոխադարձաբար.  
Երբ մէկ սաքերնիս սահի, մեքենաբար  
ինկոշ կողման հակադիր բացուկիս կը  
տարածենք և այս ամենը կընենք, որ-  
պէս զի մեր ծանրութեան կեդրոնէն  
անցնող կեդրոնահայեացը մէր խարս-  
խին, այսինքն մեր սաքերուն վրայ իյ-  
նայ, կամ անոնց մէջ տեղերը:

Մարմնոյ մը ծանրութեան կեդրո-  
նը գտնելու կերպը սորվելը կրնայ խիստ  
օկտակար ըլլալ շատ դիպուածոց մէջ,  
բայց շեմ կրնար այժմ զայն ձեզ բա-  
ցարել. վասն զի տակաւին չէք կըր-  
նար դիւրաւ հասկնալ. բայց պէտք  
է գիտնաք, որ զայն կարելի է գտնել.  
և կը խատանամ ձեզ ժամանակէ մը  
յետոյ սորվեցնել:

Գլուխ ԺԴ.

ԽԱՆՐՈՒԹԻՒՆ

(Հար.)

Բարձանի խաղ. — Կցիո. . — Կցիո, երկաթուղոյ կայարանաց :

ՕՐ. ԹԱԳ. — Առդեօք բաբան (տանեալս փիշոփի) խաղացած էք երբէք :  
ՅԱԿ. — Ո՛չ, օրինրդ, բաբանն ինչէ :  
ՕՐ. ԹԱԳ. — Եթէ կ'ուզէք, հատմը շնունք. և ահաւասիկ սա կտրուած ու գետին տապալած ծառին բունը և քիչ մը հեռուն տեսնուած մեծ տախտական էն բաբանն մը շնունքու համար : Օ՞ն, օգնեցէք ինձ որ այդ տախտական հոս բերենք և այս պառկած բունին վրայ խաչաձեւ դնենք, այնպէս որ տախտակին մէջ տեղը ձիշդ բունին վրայ գայ եւ հաւասարակիու մնայ :

Ահա այս է բաբանը, արդ՝ եթէ Մարիամը տսխտակին մէջ կողմը նըստի և Յակոբն ալ միւս կողմը, իւրաքանչիւրնիդ փոխիսակի ել և էջ կը նէք, ասիկա տեսակ մը կշռոյ կը նմանի ինչպէս են առհասարակ հաշուետանց մէջ տեսնուածները : Այս կշռուն երկամէք գաւաղանէ մը կը բայեկանայ, որ չկանչ կը կոչուի և իւր յեցակէտէն երկու հաւասար մասանց բաժնուած է, որոնք լծակին բառով ներ կը կոչուին, և իրենց ծայրերէն մէյ մէկ նժար կախուած է : Այս կշռու ձիշդ րլալու համար պէտք է որ երկու նմարները հաւասարակիշու բլան և լծակը հարիզնական :

ՅԱԿ. — Օ՞ն, մեր բաբանը փորձենք :  
ՄԱՐ. — Օրինրդ, այս չեղաւ, ես Յակոբէն ծանր ըլլալով միշտ վարը պիտի մնամ և Յակոբն ալ բարձրը :  
ՕՐ. ԹԱԳ. — Իրաւունք ունիս, բայց

կ'նանք ասոր դարման մ'ընել տախտականը քիչ մը Յակոբին կողմը հրելով և քու կողմդ կարձեցնելով : Շոգեկառաց կայարաններուն և վաճառանոցներուն մէջ ծանր բեռներ կշռելու համար տեսակ մը կշռու կը գործածուի, որ ճշճանց կը կոչուի : այս կշռոյն մէկ բազուկը միւսէն շատ երկայն ըլլալով երկայն բազուկին կողմը գրուած փոքրիկ կշռու մը հակադիր կողմը գրուած ահագին բեռները կը վերցնէ : Ճօճանց մը պանդրէ կը կոչուի : Երբ անով մարմին մը կշռելու համար նոյն մարմինէն տասն անգամ թեթեւ կշռու մը պէտք ըլլայ :

Ահա այս սկզբունքով շնուրած են նաև Գանեաները, որ Տաճկաստանի մէջ շատ կը գործածուին :

Գլուխ ԺԵ.

ԿԵԴՐՈՆԱԼՈՅՍ ԶՈՐՈՒԹԻՒՆ

Զիալիաք և, ձիան կրկեսի, Վայու խառնութերուն նողիսանքը . Զորանի մը ծայրէն կախուած ջրավիզ ամանի մ' առանց թափեցու դառնալը:

ՄԱՐ. — Օրինրդ, երեկ կրկես գայինք, ար բան մը տեսայ, որց ամենեւին ըլ կրցի խելք հասցնել : Կրնողը ինձ բայցարել թէ ինչո՞ւ ձիւվարներն ու ձիերը գտունալու ատեն գէոլ կը կրկեսին կն գրոնք կը հակին :

ՅԱԿ. — Որովհետեւ եթէ այնպէս ըլ հակին՝ հանդիսականաց կողմը կը մը զուրին և անսանց վրայ կ'իշնան . որ երկու կողմին համար ալ տհաճելիէ :

ՄԱՐ. — Եատ լսւ, բայց ինչո՞ւ պիտի իշնան, ըլ գարձած ատենին ոյս պէս չ'են հակիր, այլ իրենց ձիերուն վրայ բոլորովին կեդրօնահայեաց դիրքով կը կինան և չ'են իյնար . դառնա-

սիսած ատեննին կրտիսին հակիլ և որ շոփ արագ դառնան, այնչափ աւելի կը հակին :

Օր. ԹԱԴ. — Զիալորը որչափ արագ դառնան, այնչափ աւելի ասպարիզին կեղրոնէն հեռու կը մղուին . և ահա այս զօրութեան՝ իրենց մարմեցն կշռութեամբ դիմակալելու համար է որ ձիավորներն ու ձիերն ինքնաբերաբար գէպ ՚ի կեղրոնը կը հակին : Այս տարի մարտին շըրտին մ' առաջ կը բերէ , ո՛ իւլիսայ շայն Կեռայնելայն իւլիսին , որ շըրտը կը դառնան : Այս զօրութիւնը իւլիսին շըրտին կը կոչուի :

Այս նողկանքը , որ կըզգանք արագապէս դառնալու , օրինակի համար ձըրէլ , ատեն , դարձեալ կեղրոնախցո զօրութենէ առաջ կուգայ . որովհ հետեւ մեր ոտքերը , որոց վերայ կը դառնանք , շարժման կեղրոնը կը կազմէն , որմէ կը ջանան մեր մէջ եղած հեղուկները հեռանալ . այս հեղուկները մէր սիրու ու գլուխը կը դիմեն և դիմու պտոյտ ու նողկանք կը պատճուեն :

Եթէ ուզէք , կրնաք այս մասին դիւրին փորձ մ' ընել . երբ դերձանի մը ծայրէն որ և իցէ մարմին մը , օրինակի համար փայտի կտոր մը կապէք և յետոյ գերձանին միւս ծայրէն բըռնելով՝ գարձնէք , պիտի տեսնէք որ դառնալու ատեն դերձանը կը ձգտի և այնչափ աւելի զօրաւոր կըլլայ այս ձըրտումը , որչափ աւելի ծանր ըլլայ մարմինը և հողովումն արագ . և եթէ հոլովական շարժումն ամենաերագ ըլլայ , կրնայ դերձանը փրթիլ :

Եթէ ուզէք , կրնաք ուրիշ զուարձակի փորձ մ' ալ ընել . երբ ջրալից աման մը չուանի մը ծայրէն կախէք եւ յետոյ առանց ամանին բերանը գոցելու չուանին միւս ծայրէն բոնելով՝ պարսատիկի պէս օդին մէջ դարձնէք ,

ամսնին մէջ ջուրը բնաւ զը թափիր , թէե պայտ ընկըւ ատեն շրջուն դըրից մէջ գտնուի . վասն զի ամսնին մէջ ջուրը հողմաննախան ոչ միայն իւր կը ոյն ազդեցութեան , այլ և կեղրոնախցո զօրութեան ենթակայ կըլլայ , որ առաջնոյն ազդեցութիւնը կը խանգարէ : Երբ ամսնն իւր ջրամինին վերին կէտը գտնուի ջուրը կ'ուզէ իւր կըշռութեամբը վար թափիլ . բայց կեղրոնախցո զօրութիւնը , որ վարէն վեր կ'ազդէ , ընդհակառակը կը ջանայ զայն գէպ ՚ի վեր մղել . Ուստի երբ այս երկրորդ զօրութիւնն առաջնոյն մեծ ըլլայ , ջուրն առանց թափելու կրնայ ամսնին մէջ մնալ :

Կրնանք համանման փորձ մ' ալ կատարել ջրամինակի մը ներըն կողմը ջրալից բաժտիկ մը գնելով և երագապէս օդին մէջ դարձնելով :

Կեղրոնախցո զօրութիւնն ու ծանրութիւնը շատ անգամ իրարու . կը դիմակալեն . ՚ի մօտոյ աստեղաց շարժման վրայ խօսած ատենս պիտի բացատրեմ ձեզ թէ այս երկու զօրութեանց դիմակալութենէն ինչ արդիւնք առաջ կուգայ :



## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՄՐՅԱՆՔ . — Խօսուն մեքենայ :

ՄՐՅԱՆՔ . — Հատողներ գրուած են միրժոց բնութեան վերայ զանազան հեղինակներէ . բայց ամենէն աւելի սյս մասին գովութեան ու փառաց արժանի է Հիւափէր Անդզիացի գիտնականը , որ յայտնեց գիտութեան աշխարհին հետարբերական շատ գաղտնիքներ միջատներու կենաց վերայ : Այս համ